ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:

Օտարքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ".

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Րէալական դպրոցները:—Ներքին տեսութիւն: Նամակ Ախալցխայից: Նամակ Հին-Նախիջևանից: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: «Голосъ» լրագրի թղթակցութիւնը: —«Մշակի» հեռագիրներ:—Յայտարարութիւններ:

ՐԷԱԼԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

Ռուսաց «Новое Время» լրագիրը այն միտքն է յայտնում, որ լաւ կը լինէր, եթէ մեր րէալական դպրոցները համարվէին նոյն իրաւունքներ ունեցող ուսումնարանական հիմնարկութիւններ, ինչպէս կլասիկական գիմնազիաներ, այն զանազանութեամբ միայն, որ րէալական գիմնազիաների մէջ տիրապետէր բնական գիտութիւնների ուսումը, իսկ կլասիկական գիմնազիաներում կլասիկական ուսմունքների սիստեմը:

Այդպիսով, եթէ լրագրի միտքը ընդունվէր՝ թէ րէալական և թէ կլասիկական գիմնազիաներից դուրս եկած երիտասարդները հաւասարապէս մուտք կունենային բոլոր բարձրագոյն դպրոցների և համալսարանի մէջ, այն զանազանութեամբ որ րէալական գիմնազիաներում ուսում աւարտածները կընդունվէին տեխնիկական բարձրագոյն դպրոցներում, համալսարանի բնագիտական և մաթեմատիկական բաժիններում և բժշկական ֆակուլտէտներում, իսկ կլասիկական գիմնազիաներում ուսում աւարտածների համար ազատ ասպարէզ կը բացվի մտնել համալսարանի իրաւաբանական, լեզուագիտական ֆակուլտէտները և ուրիշ բարձրագոյն դպրոցները:

Մինչև այժմ րէալական դպրոցներում աւարտածների համար համալսարանի ոչ մի ֆակուլտէտը մատչելի չէր, իսկապէս բարձրագոյն, ընդհանուր կրթողական ուսման դռները փակված էին նրաց համար և մատչելի էին միմիայն «մասնագիտական դպրոցները:

Այդ լուրը արտատպելով «Новое Время» լրագրից, Մոսկվայի «Русскій Курьеръ» լրագիրը աւելացնում է որ մինչև այժմ Ռուսաստանի երիտասարդութեան կէսը, նրանք, որոնք սովորում էին րէալական դպրոցներում, հասարակութեան և պետութեան մէջ մի տեսակ խորթ որդիներ էին, կլասիկների հետ հաւասար իրաւունքներ չէին վայելում օրէնքների առջև, զրկված լինելով բարձրագոյն, համալսարանական ուսում ստանալու իրաւունքից:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

Օգոստոսի 25

Քանի օրից ի վեր Ախալցխայում յորդ անձրևները անպակաս են, —հնձված, բայց չը կալված ցորենին շատ մեծ վնաս պատճառեցին:

Եթէ անձրևները երկար տևեցին, ինչպէս նշաններից երևում է, գիւղացիք մեծաքանակ վնասների կենթարկվեն:

Տիկին և պարոն Անեմանց նշանակվել են առաջիկայ սեպտեմբերից Եղիսաբեթեան ուսումնարանում բացվելիք արհեստանոցի ուսուցիչներ: Եթէ չենք սխալվում մեր իգական ուսումնարաններում կանոնաւոր արհեստանոց բանալը առաջին անգամ ահա Ախալցխայում է լինում: Մտադրութիւն կայ եկող տարի գործնական տնտեսագիտութիւն էլ մտցնել:

Գաղթականութիւնից ի վեր մինչև այսօր աղքատների համար շաբթէ շաբաթ ժողոված կամաւոր նուէրների հանգանակութիւնը հոգևոր իշխանութիւնը դադարեցնել տուեց, ինչպէս կարծում ենք, չը կարողանալով պաշտպանել այդ դասը գաւառապետի դէմ. Ցանկալի էր իմանալ թէ հոգևոր իշխանութիւնը ինչ է անելու այն մօտ 1500 րուբլի պատրաստի գումարը, որը հոգաբարձուների մօտ մնաց: Եթէ անկելանոց բացանելու ցանկութիւն չը կայ, լաւ չէր լինի պատրաստի գումարը ուղարկվէր յօգուտ սովելոց:

Հայ-կաթօլիկաց հոգևոր կառավարութեան նախանդամ հայր Շաչինեանի և ծուխի մէջ ցաւալի երկպառակութիւն ընկնելով, հ. Շաչինեանցը պաշտօնից հրաժարվեցաւ: Փափագելի էր իմանալ, թէ որքան եղաւ սովեալների օգտի համար եկեղեցիներում գրված գանձանակների փողը: Ինչի այդ փողը չէ ուղարկվում ուր հարկն է:

Աբթինծայ գիւղի մօտ (Ախալցխայի գաւառում) ուր անցեալները Թուրքերը մի հայ երիտասարդի սպանել էին, այս շաբաթ դարձեալ մի եղեռնագործութիւն պատահեցաւ: Այս անգամ սպանողը հայ, սպանվողը Թուրք է:

Պասօ անունով մի Թուրք աւազակապետ վերջին ժամանակներումս սկսել է յաճախակի ասպատակութիւններ անել:

Ս. Կարապետից վերադարձողները հաստատում են այս լուրը, թէ Տաճկահայաստանում արդարև հայկական ասպատակիչ կամ վրէժխնդիր գնդեր են երևացել, թէ այդ գնդերը բաւական ուժեղ, կանոնաւոր և ապահոված են և թէ գնդերի գործի մէջ խառն է և մի քանի քուրդ շէյխերի ու աւազակապետների մատը: Եթէ ճիշդ է ինչ որ ասում են, բաւականին նշանաւոր քրդեր որսալու յաջողած են այնտեղի հայերը:

Ախալցխայի եկեղեցական գիւղերը կապալով չը տալու համար Էջմիածինը գիւղերի կառավարութիւնը այս տարի Խորէն քահանայ Բարսեղեանցին յանձնեց իբրև առանձին կառավարչի: Այդ քահանան այժմ գիւղերի բերքը կապալու է տուել 500 սոմառ ցորենի ու գարու, մինչդեռ բերքերը ոչ մի տարի 1000 սոմառից պակաս չեն եղել: Կապալառուի հետ, ասում են, ընկեր է և յիշեալ քահանայի եղբայրը:

Քաղաքիս ազգային ուսումնարանների ուսուցիչների թիւը այս տարի աւելացաւ մանկավարժութիւնը մասնաւորապէս Մոսկվայում սովորած օրիորդով: Դա տեղացի մեծ. օրիորդ Թագուհի Մամիկոնեանն է:

Անցեալ շաբաթ մի յորդ անձրևի ժամանակ Ախալցխայից մինչև Արասթուման շինած նոր խճուղու բոլոր կամուրջները գրեթէ քանդվեցան: Երթևեկութիւնը այժմ հին ճանապարհով է լինում: 275 հազար մանէթով էր շինված այդ խճուղին: Կեցցէ ինժեներ Տուլօվսքին, լաւ ճանապարհ շինեց:

Տայքեցի

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻՑ

15 օգոստոսի

«Մեղուի» 57 համարում, Հին-Նախիջևանից գրված մի նամակում, այնպիսի խոշոր ստեր էին մէջ գործել, զորս կարդալիս, կարի զարմացայ, տեսնելով, որ մարդկային կրքերը այն աստիճան կուրացնում են, որ ամեն մի ճշմարտութիւն առաթուր անելուց չեն վախենում: Մի տեսակ մարդիկ մեծ քաջութիւն են համարում այս կամ այն հասարակութեան մէջ երկպառակութեան սերմեր ձգելը և զանազան միմեանց հակառակ կուսակցութիւններ յարուցանելը: Այդ կարգի մարդկանցից տարաբաղդաբար մեր քաղաքում ևս այս տարի հանդէս դուրս եկան: Դրանց դասից է մեր քէլեխակեր տիրացու Կարօն, որը չը բաւականանալով անցեալ տարվայ Ագուլիսում յարուցած զըզվելի փոթորիկներովը, փորձ փորձեց և այստեղ իր հնարքը ցոյց տալու,—և ուսումնարանները հիմն ի վեր տապալելու: Փառք և պատիւ պարոնին. նա իր նպատակին հասաւ ու այնպէս քաղաքից հեռացաւ:

Լուսանկարչութիւնից յանկարծ տեսչական պաշտօնին հրաւիրված, և մանկավարժութեան համն ու հոտն անգամ չառած, Պերճ Պռօշեանցի ամենասիրելի և ամենաընտիր ուսուցիչ տիրացու Կարօն այժմ Շիմաշմուտ գիւղումը բաղմած, զօր է տալիս իր խանգարված ուղեղին և սուտ և սխալ տեղեկութիւններ է հաղորդում «Մեղուին:» Նա զարմանք է յայտնում պ. հոգաբարձուի և ուսուցչի կարգադրութեամբ կազմված հարցաքննութեան և դպրոցական տարեդարձի հանդեսի մասին: Ինչ զարմանալու մի բան կայ. միթէ պարոնի, որպէս վարժապետի, պարապած չը լինելու և որ և է մի արդիւնք ցոյց տուած չը լինելու համար, հոգաբարձուն կամ ուսուցիչը պարտաւոր էին առանց հարցաքննութեան աշակերտուհիներին բաց թողնելու: Պարոնը իրան արդարացնելու համար ցոյց է տալիս, իբր թէ ոչինչ արդիւնք չէ եղել և միւս առարկաներում: Պարոնը գոնէ թող յիշէ, որ քննիչները օտար մարդիկ են եղել և հաշտարար դատաւոր Յարութիւն բէկ Սարուխան-Բէկեանցը թւանշաններ էր նշանակում. Աշակերտք և աշակերտուհիք մեծաւ մասամբ հայոց լեզուի և ազգ. պատմութեան մէջ գոհացուցիչ և ամենալաւ թւեր ստացան: Պարոնը զարմանում է դարձեալ որ նախակրթարանում ազգային պատմութեան դաս է տրվում, առանց մտածել կարողանալու, որ պատմութիւնն էլ կարելի է յարմարեցնել երեխաների հասկացողութեանը: Մանաւանդ մեր քաղաքում հարկաւոր է, որ աշակերտները ստորին դասարաններից փոքր ի շատէ ծանօթանան իրանց ազգային պատմութեան հետ, որովհետև տեղացիները շուտով հանում են իրանց որդիքը ծխական ուսումնարաններից և ուղարկում քաղաքային ուսումնարան, ուր ազգ. պատմութիւն այլ ևս չեն լսի: Իսկ ինչ որ վերաբերում է օրիորդներին, յայտնի է որ այստեղ երբ օրիորդը 12 կամ 13 տարեկան դարձաւ, նորան այլ ևս ուսումնարան չեն ուղարկում.

Ուրեմն երբ պէտք է սովորէին մեր երեխայքը իրանց ինչ ազգայնութեան պատկանելը. ումից ծագած և յառաջ եկած լինելը:

Պարոնը մի ամենախոշոր սուտ ևս գրած է, որպէս թէ ազգ. պատմութիւնը աւանդված է եղել Զաքէեանի կամ Տաճկաստանի բարբառով մի այլ գրված պատմութիւնից: Այն ինչ սկզբում ոչ մի դասագիրք չէ տրված աշակերտաց ձեռքը, բերանացի կերպով ամեն մի դաս առանձին առանձին պատմած է և աշակերտները իրանք գրած են: Պարոնը իրան թոյլ է տուած գրպարտելու օրիորդ Մելիք-Շահնազարեանցին, որը միայն իր ծնողաց նախապաշարմունքից զերծ լինելով, կարողացել է շարունակել և յաճախել ուսումնարան, և առանձին ծխականի երրորդ տարուայ ընթացքն աւարտել: Իսկ ինչ որ վերաբերում է ճառախօս օրիորդին, նա ձեզանից հազարապատիկ լաւ կարդալ ու գրել գիտէ:

Պարոնը արատաւորում է և մի հոգաբարձուի պատիւը: Ինչպէս «Մեղուի», նոյնպէս «Մշակի» անցեալ մի քանի համարներում տիրացու Կարօի շարադրութեամբ և Օտարեանի ստորագրութեամբ դուրս եկան մի քանի յօդուածներ և անտեղի լուրեր, որոնց ամենի նպատակն էր արատաւորել մի այնպիսի անձի, որը անաչառ և խիստ է եղել իր պահանջներում ուսումնարանական հարցերի վերաբերութեամբ, և որը միայն եղել է Նախիջևանի հոգաբարձուների մէջ գործող անձն: Աւելորդ եմ համարում յիշել այն հակասութիւնները, որոնք ակնյայտնի երևում են տիրացու Կարօի յօդուածներում. նա մի տեղ ասում է. պ. հոգաբարձուն՝ որ է պ. Գրիգոր Տ. Բաղդասարեանց, չէ կամենում հաշիւ տալ, իսկ մի այլ տեղ յայտնում է, թէ թատրօնական ներկայացումներից այսքան զուտ արդիւնք գոյացաւ, և այս ինչ հաշիւ էլ ծախս եղաւ: Եթէ հոգաբարձուն հաշիւ չէր կամենում տալ և կամ չէր տուած, ուստի իմացաւ այսքան ծախս կամ արդիւնք լինելը.... Վերջ եմ տալիս իմ ներկայ յօդուածին լաւ համոզված լինելով, որ հասկացողի համար այսքան էլ բաւ էր:

Գէորգ Ս. Տ. Աղամեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վելիսցիխեցի երեցփոխան Գէորգ Տէրտէրեանից Արշակ քահանայ Տէր-Սահակեանի ձեռքով ստացանք մէկ րուբլ յօգուտ Հայաստանի սովեալների:

—

«Մշակի» երէկվայ համարը չը կարողացանք հրատարակել, որովհետև նոր տպարան էինք անցնում: Այժմ «Մշակը» կը տպվի Դաւթեան եղբայրների տպարանում:

—

Մեզ գրում են Նիժ գիւղից որ ներկայ թւի մարտ ամսին հաւաքվեցաւ 31 րուբլ յօգուտ Վանի սովեալների, բայց մինչև այժմ ոչ մի տեղ ուղարկված չէ այդ փողը: Թղթակիցը հարցնում է ինչ եղան այդ հաւաքված փողերը:

—

ՎԱՐԴԱՇԷՆԻՑ մեզ գրում են, որ այդտեղի մի Թուրք նորերումս բռնաբարել է մի հայ աղջկան: Աղջկայ մայրը գնացել է գանգատվելու մարմնաւոր իշխանութեանը: Թուրքը սպառնում է որ մօրը կը սպանէ:

—

«Голосъ լրագրին Կիշինևից հեռագրում են հետևեալը, օգոստոսի 22-ից: «Վանքական կալուածների վարչութիւնը, ստանալով թոյլտուութիւն զետեղել 50,000 րուբլ քաղաքային բանկ, յանձնեց կատարել այդ գործը իր քարտուղար Մայերին: Բայց սա ստանալով այդ փողերը, չը մտցրեց բանկի մէջ և անհետացաւ օգոստոսի 14-ին: Նրա անհետանալը յայտնի եղաւ միայն 18-ին օգոստոսի:»

—

«Молва» լրագիրը հաղորդում է մի անհաւատալի լուր, իբր թէ Չինաստանի նախկին դեսպան Ս. Պետերբուրգում, Չուն-Խօու, որ ներված է եղել իր կառավարութիւնից, երկու ամսից յետոյ կը վերադառնայ Ս. Պետերբուրգ, որպէս զի կրկին ընդունի ռուսաց մայրաքաղաքում իր պաշտօնը:

—

Ինչպէս հաղորդում է «Врачебныя Вѣдомости»